ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ

ARMSWISSBANK

Private & Investment Banking



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## TABLE OF CONTENTS


9 Բանկի գործադիր տնօրենի ուղերձը
Message of the Executive Director

14 Բանկի գործունեության հիմնական ուղղությունները
Main activities of the bank

17 Վարկավորում
Lending

24 Ֆակտորինգ եւ առեւտրի ֆինանսավորման գործիքներ
Factoring and trade finance

27 Առեւտրի ֆինանսավորման այլ գործիքներ
Other instruments of trade finance

29 Ներդրումային բանկային ծառայություններ
Investment banking services

37 Մարքեթինգ
Marketing

38 Տեղեկատվական տեխնոլոգիաներ
Information technologies

41 Ռիսկերի կառավարում
Risk management

43 Ներքին աուդիտ
Internal audit

45 Անձնակազմի կառավարման քաղաքականություն
Human resource management

49 Ֆինանսական արդյունքներ
Financial results

54 Անկախ աուդիտորի եզրակացություն եւ ֆինանսական հաշվետվություններ
Independant auditors report

68 Օգտակար տեղեկատվություն Բանկի մասին
Other useful information about the bank

70 Բանկի արտասահմանյան թղթակից բանկերի ցանկը
Foreign Correspondent Banks

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ | MISSION

Մեր առաքելությունն է բացահայտել հաճախորդների կարիքները՝ նրանց տրամադրելով միջազգային լավագույն փորձին համահունչ ֆինանսական լուծումներ:

Our mission is to reveal our customers' needs by providing them with financial solutions in line with the best international practice.

## ՏԵՍԼԱԿԱՆ | VISION

Լինել ՀՀ-ում կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ բանկային ծառայություններ մատուցող առաջատար բանկ՝ անձնակազմի պրոֆեսիոնալիզմի ու ճկունության, սպասարկման որակի շնորհիվ:

Our vision is to be the leading corporate, investment and private bank in the Republic of Armenia due to professionalism and flexibility of our staff and high quality customer service.





# Բանկի գործադիր տնօրենի ուղերձը

## Message of the Executive Director

Հարգելի տիկնայք և պարոնայք,

2013 թվականին Բանկը շարունակել է կայուն զարգանալ և նոր ձեռքբերումներ արձանագրել ՀՀ բանկային համակարգում՝ ամրապնդելով իր մրցակցային դիրքերը: Չնայած բանկային համակարգում նկատվող մրցակցության սրացման միտումներին, ինչը հատկապես արտահայտվում է տարատեսակ վարկային ռեսուրսների առաջարկների ավելացմամբ, Բանկին հաջողվել է տարին ամփոփել գործունեության հիմնական ցուցանիշների աճով, այդ թվում նաև՝ միջազգային կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության և վերջիններից առավել մատչելի պայմաններով ֆինանսավորում ստանալու արդյունքում:

Բանկը շարունակել է զարգանալ՝ ապահովելով իր կողմից մատուցվող ծառայությունների թե՛ որակական և թե՛ քանակական աճ, արդյունավետորեն մշակել և ներդրել է նոր ծառայություններ ու պրոդուկտներ:

Բանկի գործունեության ընդլայնման և զարգացման համար որպես էական իրադարձություն կարելի է արձանագրել 2013 թվականի ընթացքում Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման փաստը: Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 3.098 մլրդ ՀՀ դրամի չափով Հոլանդիայում գրանցված «ԲԵԼԵԳԻՆԳՍՄԱԱՉԵՓԻՋ ՋՈՆԳՈ» ՍՊԸ-ի կողմից և 2013թ. վերջի դրությամբ այն կազմել է 10.1 մլրդ ՀՀ դրամ:

2013թ. Բանկը շարունակել է համագործակցությունը Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի (այսուհետև՝ ՎԶԵԲ) հետ կնքված ՓՄՁ վարկավորման և Առևտրի ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում և ձեռք է բերել պայմանավորվածություն այլ ծրագրերի շրջանակներում հետագա համագործակցության վերաբերյալ:

Dear ladies and gentlemen,

in 2013 the Bank continued to grow steadily accomplishing new achievements and strengthening competitive position in the RA banking sector. Despite the increased competition in the banking sector, which is most evident in the credit market, the Bank reported an increase in its year -end key performance indicators, which, among other factors was due to active cooperation with international organizations and funds received with more favorable conditions. The Bank continued to develop increasing both the quality and the quantity of its services and effectively developed and introduced new products.

The statutory capital increase in 2013 was a significant event for the Bank's further development. "BELEGGINGSMAATSCHAPPIJ JONGO" B.V., registered in Holland, raised the Bank's capital by AMD 3.098 billion and in the end of 2013 the statutory capital amounted to AMD 10.1 billion.

In 2013 the Bank continued cooperation with the European Bank for Reconstruction and Development (hereinafter, EBRD) under the SME lending and the Trade Facilitation programs, as well as came to an agreement for further cooperation within the scope of other programs.

In 2013 the Bank initiated cooperation with "Home for Youth" UCO CJSC offering young families mortgage loans at more favorable conditions. The Bank also continued activities towards increasing its mortgage loans portfolio under the National Mortgage Company's program. In 2013 the Bank enhanced cooperation with Factors Chain International (FCI) in frames of international factoring and with the German Armenian fund within the scope of SME lending and "Renewable Energy Development" programs.

In 2013 the Bank signed a Memorandum of Understanding with Panarmenian Bank which gives new opportunity to increase financing activities offering different kind of co-financing products to export-oriented companies making long-term investment projects. It's worth mentioning that the first transaction within the scope of the Memorandum

2013թ. Բանկը սկսել է համագործակցել «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ առավել բարենպաստ պայմաններով հիփոթեքային վարկեր առաջարկելով երիտասարդ ընտանիքներին: Հարկ է նշել նաև, որ Բանկը շարունակել է ակտիվ աշխատանքներ իրականացնել Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկավորման ծավալների ընդլայնման ուղղությամբ: Բանկը շարունակել է համագործակցությունը FCI միջազգային ֆակտորինգային ընկերության և «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ Հիմնարկի ՓՄՁ վարկավորման ու «Վերականգնվող էներգիայի զարգացում» վարկային ծրագրերի շրջանակներում:

2013թ. Բանկը նաև ստորագրել է փոխըմբռնման հուշագիր Համահայկական Բանկի հետ, որի շրջանակներում համագործակցությունը հնարավորություն է ընձեռելու ընդարձակել ֆինանսավորման հնարավորությունները՝ երկարաժամկետ ներդրումային ծրագրեր իրականացնող արտահանման միտված ձեռնարկությունների համար առաջարկելով համաֆինանսավորման տարբեր փաթեթներ: Հարկ է նշել, որ համագործակցության շրջանակներում առաջին համատեղ գործարքն արդեն իրականացվել է:

Բանկը նախատեսում է ընդլայնել իր գործընկերների շրջանակը՝ շեշտադրելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը: Այս նպատակով Բանկը շարունակելու է ակտիվ գործունեություն ծավալել ինչպես առկա գործընկերների մասով համագործակցության ընդլայնման, այնպես էլ նոր միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատման ու զարգացման ուղղությամբ:

Հաճախորդների թվաքանակի աճին զուգահեռ Բանկը 2013թ. շարունակել է հաճախորդների բարձրորակ սպասարկումը՝ սկզբունքորեն վերանայելով հաճախորդների սպասարկման և ծառայությունների մատուցման պայմանները, մեխանիզմներն ու տեխնոլոգիաները, այն ավելի որակյալ, գրավիչ և հաճախորդների տեսանկյունից ավելի հարմարավետ դարձնելու նպատակով:

2013թ. Բանկն էական ձեռքբերումներ է ունեցել նաև ներդրումային գործունեության բնագավառում:

has already been made.

The Bank plans to increase the number of its partners mainly cooperating with international organizations. For this purpose the Bank will continue expanding the cooperation with existing partners as well as establishing and developing further cooperation with new financial organizations.

With increasing the number of customers, the Bank continued providing high quality service. The Bank also reviewed the terms, mechanism and technologies of customer service to make it more comfortable and attractive for customers.

In 2013 the Bank also had significant achievements in its investment activity.

In 2013 the Bank held its status of Government Securities market agent and acted as a market-maker for the securities issued by its customers as a result of its continuous vigorous activities in the investment market.

The Bank organised 4 underwritings of AMD 3.4 billion nominal value discount securities for “National Mortgage Company” RCO CJSC in “NASDAQ OMEX ARMENIA” OJSC. In January 2013 the Bank also completed USD 6.0 million nominal value “Artsakh HEK” OJSC coupon bonds’ first underwriting.

The Bank will continue to provide the current investment services as well as develop new products. As new products the Bank will offer futures and options on foreign companies’ stocks, international indexes and commodity.

Brockerage services development, particularly, opportunities of international market marginal transaction services for customers, metal accounts and transactions with gold, etc are the probable directions of further development. The above allows the Bank to meet its mid-term goals.

Remaining loyal to its strategy and business style the Bank will continue to provide the steady growth of its main indicators and offer new corporate and investment banking services to improve customer service terms, quality and the assortment of the provided services.

On behalf of the Bank’s staff I would like to express my gratitude towards our customers, partners, the Board and the shareholders for their trust, support and mutually beneficial cooperation. I would like also to express my trust and gratitude to the ARMSWISSBANK staff for their commitment.

2013թ. Բանկը շարունակել է նաև իր ակտիվ ներդրումային գործունեությունը՝ պահպանելով պետական պարտատոմսերի շուկայի Գործակալի կարգավիճակը և հանդես գալով որպես իր հաճախորդների կողմից թողարկվող արժեթղթերի մարքեթ-մեյքեր:

Բանկը կազմակերպել է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ կողմից թողարկված 3.4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով զեղչատոկոսային պարտատոմսերի 4 թողարկումների տեղաբաշխումը «Նասդաք ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ում: Բանկը 2013թ. հունվարին ավարտել է նաև «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ կողմից թողարկված 6.0 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով անվանական արժեկտրոնային պարտատոմսերի առաջին թողարկման տեղաբաշխումը:

Ներդրումային գործառնությունների մասով Բանկը շարունակելու է մատուցել իր կողմից արդեն իսկ մշակված ծառայությունները, ինչպես նաև իրականացնել նոր պրոդուկտների մշակման և զարգացման գծով աշխատանքներ: Նոր պրոդուկտների գծով Բանկը նախատեսում է ներդնել և իր հաճախորդներին առաջարկել օտարերկրյա բաժնետոմսերի, միջազգային ֆոնդային ինդեքսների ու հումքային ապրանքների ֆյուչերսային և օպցիոն պայմանագրերով գործարքների իրականացման մեխանիզմներ: Գործունեության ակտիվացման հնարավոր ուղղություններից են բրոքերային ծառայությունների զարգացումը, մասնավորապես՝ միջազգային շուկաներում հաճախորդներին մատուցվող արժեթղթերի մարժինալ գործարքների իրականացման հնարավորությունների ընդլայնումը, ինչպես նաև մետաղական հաշիվների և ոսկով գործառնությունների գծով ծառայությունների մատուցումը և այլն: Այս ամենը հնարավորություն է տալիս Բանկին՝ իրականացնել իր միջնաժամկետ ծրագրային նպատակները:

Բանկը, հավատարիմ մնալով իր ռազմավարությանը և գործելաոճին, շարունակելու է ապահովել գործունեության հիմնական ցուցանիշների կայուն աճ, ինչպես նաև ներդնելու է կորպորատիվ և ներդրումային բանկային նոր ծառայություններ՝ հաճախորդների սպասարկման որակը և առաջարկվող ծառայությունների տեսականին ու պայմաններն առավելագույնս բարելավելու նպատակով:

Բանկի անձնակազմի անունից իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում մեր Հաճախորդներին, Գործընկերներին, Խորհրդին և Բաժնետերերին՝ Բանկին ցուցաբերած վստահության և աջակցության, ինչպես նաև փոխշահավետ համագործակցության համար:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու երախտագիտությունը հայտնել նաև ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի անձնակազմին՝ նվիրված աշխատանքի համար:

**Գևորգ Մաչանյան**
Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն

**Gevorg Machanyan**
Chairman of the Management Board
Executive Director

## Պրոֆեսիոնալիզմ | Professionalism

Լավագույն արդյունքների հասնելու նպատակով՝ մեր փորձառու եւ առաջադեմ մասնագետները մշտապես բարձրացնում են իրենց մասնագիտական պատրաստվածությունը, փոխանակվում են իրենց գիտելիքներով եւ փորձով։

To achieve the best results our experienced and highly qualified professionals continuously enhance the level of their professionalism and exchange their knowledge and experience.


184 188
1948

# Բանկի գործունեության հիմնական ուղղությունները

## Main activities of the bank

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, շարունակում է գործունեություն ծավալել երեք հիմնական ուղղություններով և մասնագիտանալ կորպորատիվ, ներդրումային ու անհատական (private) բանկային ծառայությունների մատուցման ոլորտում՝ իր առջև ունենալով ՀՀ-ում այդ ուղղությամբ առաջատար բանկ դառնալու տեսլականը:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն առանձնանում է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող համալիր ծառայությունների լայն տեսականիով՝ սկսած ավանդական բանկային ծառայություններից (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորում և այլն) մինչ ոչ ավանդական բանկային ծառայություններ (այլընտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվության մատուցում և այլն):

Առևտրի ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային ֆինանսական ֆյուչերսները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ոլորտում գործող հաճախորդներին՝ նպատակ ունենալով պահպանել նրանց մրցունակությունը տեղական և միջազգային շուկաներում՝ ընձեռելով նոր շուկաներ ներթափանցելու հնարավորություն:

Սկսած 2008թ. Բանկն անդամակցում է Factors Chain International-ին (Միջազգային ֆակտորինգային ասոցիացիա), ինչը հնարավորություն է տալիս Բանկին միջազգային ֆակտորինգային գործառնություններ իրականացնել ավելի քան 70 երկրում գտնվող շուրջ 270 անդամ-բանկերի միջոցով:

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների

Remaining loyal to its policy, ARMSWISSBANK continues to evolve activities in three main directions, namely, corporate, investment and private banking, with the vision to become a leading bank in Armenia in those areas.

ARMSWISSBANK stands out by the wide range of services provided to its corporate clients including both traditional (payment and settlement services, lending services, flexible deposit schemes, trade finance, etc.) and non-traditional services (alternative financing, factoring, forward, swap, option, financial consulting, etc.)

Trade finance, factoring as well as commodity and financial futures are mainly designed for clients engaged in importing and exporting activities to support their competitiveness in local and international markets and facilitate new markets penetration.

Since 2008 the Bank is a member of FCI (Factors Chain International), which enables the Bank to emplement international factoring operations in more than 70 countries via a network of about 270 member banks.

One of the Bank's main strategic directions is investment banking complying with international standards. The Bank offers its customers a wide range of investment instruments, such as stocks of American, European and Russian companies and investment funds, depository notes, government and corporate bonds, commodity futures as well as repo agreements and marginal operations with foreign securities, transactions with gold including metal accounts, etc.

The Bank's clients can improve risk diversification and manage their cash flows more efficiently through derivatives.

In order to cope with new market challenges and to develop new investment projects successfully, ARMSWISSBANK offers underwriting services to its corporate clients.

As one of the leaders in the Armenian government securities market and a government securities agent

մատուցումը: Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի, ինչպես նաև ամերիկյան, եվրոպական, ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ոսկով գործառնություններ և այլն:

of RA, ARMSWISSBANK acts as a market maker to enhance liquidity of the Armenian securities market. ARMSWISSBANK continues active participations to initiatives regarding legal reforms of financial intermediation in the RA securities market.

ARMSWISSBANK offers its clients tailor-made services, including development of individual, corporate and other types of securities portfolios, brokerage, custodial and consulting services. The flexibility while working with the clients is one of the key factors for the progressive development of the Bank and promotion of “ARMSWISSBANK” brand.



## ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
## Grigor Hovhannisyan

Գործադիր տնօրենի տեղակալ -
Վարկավորման դեպարտամենտի
տնօրեն

Deputy Executive Director -
Director of Lending
Department

# Վարկավորում

## Lending

### Ընդհանուր վիճակագրություն

2013թ. ընթացքում Բանկը, չնայած ֆինանսա-բանկային շուկայում առկա սուր մրցակցությանը և ՀՀ տնտեսության աճի տեմպերի դանդաղեցմանը, շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել վարկավորման բնագավառում՝ փորձելով զարգացնել նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված հաջողությունները:

2013թ. վերջի դրությամբ Բանկի վարկային պորտֆելը նախորդ տարվա նույն ժամանակա-շրջանի համեմատ աճել է մոտ 7.6%-ով, իսկ վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտները՝ շուրջ 8.5%-ով: 2013թ. ընթացքում Բանկը տրամադրել է մոտ 20.3 մլրդ ՀՀ դրամ ծավալով վարկեր: Հարկ է նշել, որ նույն ժամանակահատվածում մարված վարկերի ծավալը կազմել է մոտ 18.5 մլրդ ՀՀ դրամ:

### Summary statistics

In spite of the strong competition in the financial market and the decreasing tendency of economic grwoth in Armenia, the Bank was rather active in the sphere of lending in 2013 continuing to further develop the achievments of the previous years.

In 2013 the loan portfolio of the Bank grew by about 7.6% and interest income earned thereon increased by 8.5%. In 2013 the Bank made loan disbursements for the amount of AMD 20.3 billion. In the meantime the amount of total loan payment amounted to AMD18.5 billion.

Վարկային պորտֆելի և վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան (մլն ՀՀ դրամ)

Dynamics of the loan portfolio and interest income on lending activities (million AMD)



## Վարկային ռիսկի կառավարում

Վարկային ռիսկի կառավարման նպատակով Բանկը մշտապես աշխատանքներ է իրականացնում և մեծ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բաշխվածությանն ըստ տնտեսության ճյուղերի՝ բացառելով առանձին ճյուղի կենտրոնացումը: Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի բաշխվածությունը՝ ըստ տնտեսության ճյուղերի:

## Credit risk management

To manage credit risk the Bank always carries out activities and pays particular attention to the diversification of the loan portfolio by the economy sectors excluding centralization within separate sectors.

Below is the loan portfolio distributed by the economy sectors.

| Տնտեսության ճյուղեր<br>Sectors of the economy | Տեսակարար կշիռը վարկային պորտֆելում (%)<br>Share in the lending portfolio (%) | | | |
|---|---|---|---|---|
| | 2010 | 2011 | 2012 | 2013 |
| Էներգետիկա<br>Energy | 15,69 % | 20,24 % | 19,54 % | 20,79 % |
| Առևտուր<br>Trade | 15,75 % | 15,08 % | 15,20 % | 12,97 % |
| Մշակող արդյունաբերություն<br>Processing industry | 12,21 % | 13,81 % | 13,95 % | 11,93 % |
| Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն<br>Agriculture, forestry and fishing | 11,21 % | 8,55 % | 11,06 % | 11,00 % |
| Հիփոթեքային վարկեր<br>Mortgage loans | 8,89 % | 10,19 % | 11,5 % | 11,54 % |
| Սպառողական վարկեր<br>Consumer loans | 9,78 % | 8,55 % | 7,08 % | 7,14 % |
| Տնտեսության այլ ճյուղեր<br>Other sectors of the economy | 26,47 % | 23,58 % | 21,61 % | 24,63 % |

2013թ. ընթացքում Բանկը համագործակցել է KfW զարգացման Բանկի վարկային ծրագրերը կառավարող Գերմանահայկական հիմնադրամի (GAF) հետ «Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրի շրջանակներում:

Հարկ է նշել, որ էլեկտրաէներգիայի, մասնավորապես վերականգնվող էներգիայի արտադրության ոլորտում վարկային ներդրումների մեծ տեսակարար կշիռը պայմանավորված է Բանկի՝ այդ բնագավառում կատարած բազմամյա լուրջ աշխատանքով և Հայաստանի Հանրապետության համար տվյալ ոլորտի ռազմավարական նշանակությամբ:

Մինչ այժմ Բանկի կողմից վերականգնվող էներգիայի արտադրության ոլորտում ֆինանսավորվել է թվով 23 ՀԷԿ, ընդամենը՝ 4.9 մլրդ ՀՀ դրամի չափով, ընդ որում՝ Գերմանահայկական հիմնադրամի (GAF) «Վերականգնվող էներգիայի զարգացման ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է՝ 4 ՀԷԿ, ընդամենը՝ 302 մլն ՀՀ դրամի չափով: Տարվա ընթացքում Բանկը շարունակել է իրականացնել ինչպես սեփական բիզնես-գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու, այնպես էլ վարկային ռիսկը կանխարգելելու և զսպելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ:

## Մասնակցություն միջազգային եւ տեղական վարկային ծրագրերին

Բանկը կարևորում է միջազգային վարկատու կազմակերպությունների հետ համագործակցությունը, քանի որ այն բացի կայուն, երկարաժամկետ և մատչելի միջոցների աղբյուր հանդիսանալուց, նպաստում է նաև Բանկի աշխատողների մասնագիտական պատրաստվածության և ամենատարբեր ներդրողների ու գործընկերների շրջանում Բանկի հեղինակության բարձրացմանը: Այս տեսանկյունից Բանկի ռազմավարական գործընկերներն են՝

- Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ), որի հետ գործընկերության հիմքերը դրվել են դեռևս 2010թ.: Այդ տարի կնքվել է 5.0 մլն ԱՄՆ դոլար ծավալով վարկային պայմանագիր՝ Փոքր և Միջին Ձեռնարկությունների (ՓՄՁ) վարկավորման ու 3.0 մլն ԱՄՆ դոլարի համաձայնագիր՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրերի (ԱՖԾ) իրականացման նպատակով:

In 2013 the Bank cooperated with German Armenian Fund (GAF) which is the loan-program regulator for KFW development bank within the scope of the “Renewable energy development” program.

It is worth mentioning, that the significant share of investments in the energy sector, particularly in the renewable energy sector, is due to the Bank’s long-term intensive activities in this sphere and its strategical significance for Republic of Armenia.

Until now the Bank financed 23 hydropower stations with total amount of AMD 4.9 billion and only 4 of them with total amount of AMD 302 million was financed by the German Armenian Fund (GAF) within the scope of Renewable energy production. During the year the Bank continued its activities for both increasing the efficiency of its own lending procedure and mitigating credit risk.

## Participation in local and international lending programs

The Bank highly prioritizes cooperation with international lending organizations since besides being a source of stable, long term and less expensive funds such cooperation also enhances the professionalism of the Bank’s staff and increases the Bank’s reputation among investors and partners. The Bank’s strategic partners from this perspective are the following:

- European Bank for Reconstruction and Development (EBRD), with which the Bank started cooperation since 2010 signing an agreement of Small and Medium Enterprises (SME) financing of USD 5 million and Trade Facilitation Program (TFP) of USD 3 million. In 2012-2013 the SME funds limit provided by EBRD was increased by USD 6 million reaching USD 9 million. In 2014 the Bank anticipates further expansion of cooperation both through attracting more funds and implementing new joint projects.

- The German Armenian Fund with which the Bank cooperates within the scope of the “Renewable energy development” and SME financing programs. Within the “Renewable energy development” program the Bank started the cooperation in 2006 and is one of the leaders in the RA banking system. The Bank anticipates a significant growth for the above mentioned program throughout the coming years.

- Asian Development Bank, with which the Bank plans to

2012-2013թթ. ժամանակահատվածում ՎԶԵԲ-ի կողմից ԱՖԾ-ի շրջանակներում տրամադրված միջոցների սահմանաչափն ավելացել է 6.0 մլն ԱՄՆ դոլարով և կազմել է 9.0 մլն ԱՄՆ դոլար: 2014թ. Բանկն ակնկալում է խորացնել ու ընդլայնել համագործակցությունն ինչպես ներգրավված միջոցների ավելացման ուղղությամբ, այնպես էլ համատեղ ծրագրեր իրականացնելու գործում:

- Գերմանահայկական հիմնադրամի (GAF-German-Armenian Fund) հետ Բանկը համագործակցում է «Վերականգնվող էներգիայի զարգացման ֆինանսավորում» և ՓՄՁ վարկավորում ծրագրերի շրջանակներում: Հարկ է նշել, որ «Վերականգնվող էներգիայի զարգացման ֆինանսավորում» ծրագրում Բանկը ներգրավված է դեռևս 2006թ., և հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի ընդգծված առաջատարներից մեկը: Նշված ծրագրով Բանկն ակնկալում է էական աճ արձանագրել առաջիկա տարիներին:

- Ասիական Զարգացման Բանկը (ADB-ASIAN DEVELOPMENT BANK), որի հետ Բանկը 2014թ. կսկսի համագործակցությունը առևտրի ֆինանսավորման գծով, արդեն իսկ հաստատված 2 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափի շրջանակներում:

- Համեմատաբար նոր զարգացման ուղղություններից կարելի է առանձնացնել հիփոթեքային վարկավորումը, որը սկզբնական շրջանում Բանկի կողմից առաջարկվեց որպես Կորպորատիվ Բենքինգի տրամաբանական շարունակություն, սակայն հետագայում ընդլայնվեց՝ հաճախորդներին ծառայությունների ամբողջական փաթեթ առաջարկելու նպատակով: «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի անդամակցության արդյունքում Բանկին հնարավորություն ընձեռվեց իր հաճախորդներին տրամադրել ազգային արժույթով երկարաժամկետ հիփոթեքային վարկեր: Նշված ծրագրի շրջանակում 2013թ. վերջին վերաֆինանսավորված վարկերի ծավալը կազմել է 460.5 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով մոտ 100.0%-ով, իսկ հիփոթեքային վարկերի ընդհանուր պորտֆելը կազմել է 2,957.3 մլն ՀՀ դրամ, որը գերազանցում է նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշը մոտ 8.11%-ով: 2013թ. վերջին Բանկն անդամակցել է նաև «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հիփոթեքային վարկավորման ծրագրին, որի շրջանակներում ֆինանսավորման

cooperate within the scope of trade financing for approved USD 2 million in the 2014.

Mortgage lending can be distinguished as a relatively new financing direction which was initially suggested by the Bank as a logical continuation of Corporate Banking, later on it was extended to offer the clients a complete portfolio of services. Membership to the mortgage loans refinancing program of the ‘’National Mortgage Company” RCO CJSC enabled the Bank to lend long term mortgage loans in national currency. As at 2013 year end the amount of refinanced loans was AMD 460.5 million over-performing the previous year’s indicator by about 100.0%. The Bank’s entire mortgage loans portfolio amounted to more than AMD 2,957.3 million, which exceeds the previous year’s indicator by about 8.11%. At 2013 year end the Bank became a member of “National Mortgage Company” RCO CJSC. The amount of financing funds within the scope of this cooperation will be noticeable in the year of 2014.

## New lending products

Purchase order financing and Pre-export financing facilities are relatively new directions of lending which are important instrumentsnts for the Bank to achieve its strategic goals (offering full range of services to corporate clients) and well demanded new services in the Armenian banking market.

During the previous years the Bank disbursed about AMD 81.2 million and USD 1,646 thousand within the scope of its Purchase order financing and USD 1,027 thousand within the scope of Pre-export financing facilities. For the coming year the Bank is going to double the results, by cooperating with the EBRD’s Trade Facilitation Program.

ծավալները նկատելի կլինեն 2014թ. ընթացքում:

## Նոր վարկային ծառայություններ

Նախորդ տարիների ընթացքում Բանկի կողմից ներդրված վարկավորման համեմատաբար նոր ուղղություններից են Գնման պատվերի ֆինանսավորման ծրագիրը և Արտահանման խթանման ծրագիրը: Վերջիններս Բանկի ռազմավարական խնդիրների լուծման (կորպո-րատիվ հաճախորդների բազմակողմանի սպասարկում) գործիքակազմի էական տարրե-րից են և նոր՝ բավականին պահանջված ծառայություններ են համարվում հայաստանյան բանկային շուկայում: Նախորդ տարվա ընթաց-քում Բանկը Գնման պատվերի ֆինանսավորման ծառայության գծով տրամադրել է 81.2 մլն ՀՀ դրամի և 1,646 հազ. ԱՄՆ դոլարի, իսկ Արտահանման խթանման ծառայության գծով՝ 1,027 հազ. ԱՄՆ դոլարի չափով վարկային ռեսուրսներ: Առաջիկա տարվա ընթացքում ակնկալվում է կրկնապատկել արդյունքները՝ մասամբ համատեղելով այն ՎԶԵԲ ԱՖԾ շրջանակներում ֆինանսավորմամբ:

## Գործընկերություն | Partnership

• Փոխշահավետ արդյունքների հասնելու նպատակով՝ մենք արժեւորում ենք հաճախորդների եւ գործընկերների հետ երկարատեւ ու շարունակական համագործակցությունը։

• Մենք գործընկերության ոգով ենք համագործակցում նաեւ մեր աշխատակիցների հետ՝ ապահովելով նրանց մասնակցությունը Բանկի ռազմավարության իրականացման գործում։

• To achieve mutually beneficial results, we highly appreciate the persistent and long lasting cooperation with our customers and partners.

• We cooperate in a spirit of partnership with our employees either by ensuring their participation in the strategic plan implementation.



# Ֆակտորինգ և առևտրի ֆինանսավորման գործիքներ

# Factoring and trade finance

## Ֆակտորինգ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի կողմից իրականացված ընդհանուր ֆակտորինգային գործարքների ծավալը կազմել է մոտ 5.1 մլրդ ՀՀ դրամ` նախորդ տարվա համեմատ նվազելով 55.3%-ով: Ինչ վերաբերում է տարվա վերջի դրությամբ ֆակտորինգի ընդհանուր պորտֆելին, ապա այն կազմել է մոտ 1.1 մլրդ ՀՀ դրամ` նախորդ տարվա մոտ 3.1 մլրդ ՀՀ դրամի փոխարեն:

Հարկ է նշել նաև, որ 2013թ. ընթացքում միջազգային ֆակտորինգի գործարքների ծավալը կազմել է շուրջ 1,4 մլն ԱՄՆ դոլար, իսկ նույն տարվա վերջի դրությամբ միջազգային ֆակտորինգի պորտֆելը կազմել է շուրջ 500 հազ. ԱՄՆ դոլար: Կարևորելով միջազգային ֆակտորինգի ունեցած դերը առևտրի ֆինանսավորման ոլորտում` 2014թ Բանկն ակտիվացնելու է միջազգային ֆակտորինգի հետագա ընդլայնմանն ու հաճախորդների շրջանում տարածմանն ուղղված միջոցառումները:

2013թ. տնտեսության որոշ համակարգաստեղծ հաճախորդների շրջանում ֆինանսական խնդիրների արձանագրման արդյունքում Բանկը որդեգրեց ավելի զգուշավոր քաղաքականություն` սահմանափակելով կամ հրաժարվելով որոշ հաճախորդների հետ համագործակցությունից:

2013թ. ընթացքում Բանկը ֆակտորինգի պորտֆելի որակական ցուցանիշների բարելավման նպատակով աշխատանքներ է իրականացրել պորտֆելի դիվերսիֆիկացիայի ուղղությամբ` ներգրավելով ինչպես նոր ընկերությունների, այնպես էլ խորացնելով համագործակցությունը գործող հիմնական հաճախորդների և դեբիտորների հետ: Բանկը նախատեսում է ապահովել ֆակտորինգի պորտֆելի հետագա դիվերսիֆիկացումը նաև 2014թ. ընթացքում` տնտեսության նոր ոլորտներից ընկերությունների ակտիվ ներգրավման միջոցով:

## Factoring

During the reporting year overall factoring operations amounted to AMD 5.1 billion decreasing by 55.3% compared to the previous year. As at 2013 year end the overall factoring portfolio amounted to AMD 1.1 billion compared to previous year's AMD 3.1 billion.

It is worth mentioning that during 2013 the total amount of international factoring operations amounted to USD 1.4 million, and the international factoring portfolio amounted to USD 500 thousands as at 2013 year end.

In 2014 the Bank will activate factoring portfolio further expansion and will take actions to make it more popular among customers taking into consideration the importance of international factoring in trade financing.

In 2013, as several large clients faced financial issues in the market the Bank applied more cautious policy limiting and sometimes even refusing cooperation with some customers.

In 2013 to improve the indicators of factoring protfolio the Bank took actions to ensure the factoring portfolio diversification by attracting new clients as well as taking the cooperation with existing buyers and suppliers to the next level. In 2014 the Bank plans to provide further diversifiaction of the factoring protfolio by attracting clients operating in the new sectors of the economy.

Ֆակտորինգային գործարքների տարեկան ծավալները (մլրդ դրամ) | Annual turnover of domestic factoring (billion AMD)

| Year | Turnover |
|---|---|
| 2007 | 0,3 մլրդ billion |
| 2008 | 1,6 մլրդ billion |
| 2009 | 2,7 մլրդ billion |
| 2010 | 3,9 մլրդ billion |
| 2011 | 5,4 մլրդ billion |
| 2012 | 11,4 մլրդ billion |
| 2013 | 5,1 մլրդ billion |



ԳԵՎՈՐԳ
ԽԱՉԱՏՐՅԱՆ
Gevorg Khachatryan

Գործադիր տնօրենի տեղակալ -
Հաճախորդների սպասարկման
դեպարտամենտի տնօրեն,

Deputy Executive Director -
Director of Customer
Service Department

# Առևտրի ֆինանսավորման այլ գործիքներ

## Other instruments of trade finance

Բանկի համար միջազգային առևտրի ֆինանսավորումը շարունակում է մնալ ֆինանսավորման ռազմավարական և առաջնային ուղղություններից մեկը: Բանկը մատուցում է ավանդական և ոչ ավանդական ֆինանսավորման գործիքների ամբողջական փաթեթ, ինչը հնարավորություն է ընձեռում բավարարել հաճախորդների պահանջները ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման գործարքներում:

Առևտրի ֆինանսավորման բնագավառում Բանկի ձեռքբերումները պայմանավորված են նաև տվյալ ոլորտում ՎԶԵԲ-ի և Առևտրի միջազգային պալատի (ICC) կողմից համատեղ կազմակերպված դասընթացների շրջանակներում Բանկի աշխատակիցների արձանագրած մասնագիտական հաջողություններով:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններն ակտիվորեն համագործակցում են ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի հետ` հաստատելով ֆինանսավորման սահմանաչափեր և ցուցաբերելով տեխնիկական աջակցություն: Բանկի խոշոր գործընկերներից է ՎԶԵԲ-ը, որը առևտրի ֆինանսավորման նպատակով Բանկի համար հաստատել է 9 մլն ԱՄՆ դոլարի սահմանաչափ: 2013թ. ընթացքում ՎԶԵԲ-ի ԱՖԾ-ի շրջանակներում Բանկն իրականացրել է մոտ 6.6 մլն ԱՄՆ դոլարի չափով գործարքներ, իսկ տարվա վերջի դրությամբ Բանկի ԱՖԾ-ի պորտֆելը կազմել է մոտ 4.7 մլն ԱՄՆ դոլար:

2014թ. միջազգային ֆակտորինգային ծառայության գծով Բանկը շարունակելու է համագործակցել FCI (Factors Chain International) առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների միջազգային ցանցի հետ, իսկ ԱՖԾ-ի շրջանակներում` ՎԶԵԲ-ի և ԱԶԲ (ADB-ASIAN DEVELOPMENT BANK)-ի հետ:

International trade financing countinues to remain as one of the main strategic and primary directions for the Bank. The Bank provides both traditional and non traditional full portfolio of financial instruments, which provides opportunity to satisfy customers' finanical needs in both exporting and importing.

The Bank's achievements in trade financing are also due to its staff professional successes recorded within the EBRD and International Chamber of Commerce training porgrams.

International organizations actively cooperate with ARMSWISSBANK by approving finacing limits and providing technical support. One of the strategic partners is EBRD which has approved a USD 9 million limit for trade financing. In 2013 within the scope of EBRD's Trade Facilitation Program the Bank's made USD 6.6 million transactions, and at the end of the year the Bank's trade finanincg portfolio was USD 4.7 million.

In 2014 the Bank will continue its cooperation with FCI (Factors Chain International)-the network of leading factoring organizations, within the scope of internatinoal factoring services, and with EBRD and ADB within the scope of Trade Facilitation Program.



## ԿԱՐԵՆ ՏՈՒՐՅԱՆ
## Karen Turyan

Գործադիր տնօրենի տեղակալ - Ներդրումային դեպարտամենտի տնօրեն

Deputy Executive Director - Director of Investment Department

# Ներդրումային բանկային ծառայություններ

# Investment banking services

## Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխումներ

2013թ. ընթացքում կորպորատիվ արժեթղթերի շուկայում նշանակալի իրադարձություն կարելի է համարել արժեթղթերի հաշվառման միասնական համակարգի փոփոխությունը, որի արդյունքում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն հաշվետերերի և թողարկողների սպասարկումը սկսեց իրականացնել միջնորդ կազմակերպությունների` Հաշվի օպերատորների միջնորդությամբ: Հարկ է նշել, որ Բանկը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հետ կնքել է Հաշվի օպերատորի կարգավիճակի շնորհման համապատասխան պայմանագիր: Նշված կարգավիճակի ստացումը կարևոր հանգամանք է հանդիսացել Բանկի կողմից նոր հաճախորդների ներգրավման, ինչպես նաև գործող հաճախորդներին ծառայությունների էլ ավելի ընդգրկուն փաթեթ առաջարկելու գործում: 2013թ. ընթացքում Բանկը ռեեստրի վարման պայմանագիր է կնքել թվով 75 թողարկողի հետ (որից 4-ը` պարտատոմսերի ռեեստրի վարման գծով), իսկ պահառության պայմանագիր` թվով 103 հաշվետիրոջ հետ: 2013թ. ընթացքում կորպորատիվ արժեթղթերի առաջնային շուկայում իրականացվել է թվով 8 թողարկում` երկու դոլարային` 5 մլն ԱՄՆ դոլար թողարկման ընդհանուր ծավալով և վեց դրամային` 5.8 մլրդ ՀՀ դրամ թողարկման ընդհանուր ծավալով: Ընդհանուր առմամբ բոլոր 8 թողարկումների ծավալը դրամային արտահայտությամբ կազմում է ավելի քան 7.8 մլրդ ՀՀ դրամ:

Հարկ է նշել, որ ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը շարունակել է հանդես գալ որպես շուկայի առաջատար և կազմակերպել է հիշյալ թողարկումների 44 %-ը` «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի 3.4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով զեղչատոկոսային պարտատոմսերի 4 թողարկումները:

## Corporate securities underwriting

In 2013 the main event in the corporate securities market was the change in Unified Settlement System of securities. As a result the "Central Depository of Armenia" OJSC started to provide services to account holders and issuers through mediation organizations (Account Operators). It is worth mentioning, that the Bank singed an Account Operator status granting contract with the "Central Depository of Armenia" OJSC. The above mentioned status was a key factor to attract new clients as well as to expand the range of offered products' portfolio for existing clients. In 2013 the Bank signed registry maintanance agreeements with 75 issuers (4 of which were on bond registry maintanance) and custody service contracts with 103 account holders.

In 2013 there were 8 issues in the RA primary corporate securities market, two of which were in US dollars with the oveall mount of USD 5 million and the remaining six were in Armenian drams, with the overall amount of AMD 5.8 billion.The total amount of 8 issues in Armenian dram equivalent amounted to more than 7.8 billon.

It is worth mentioning, that "AMRSWISSBANK" CJSC continued to act as the leader of the market by conducting 44 of the mentioned issues for the ''National Mortgage Company" RCO CJSC's discount bonds with the nominal value of AMD 3.4 billion.

The underwriting of the of the bonds was organised in "NASDAQ OMX ARMENIA" OJSC stock exchange through close auction. The Bank assisted the Company to register the bondholders' property rights in the "Central Depository of Armenia" OJSC and in "ARMSWISSBANK" CJSC, as well as to transfer the bonds to the bondholders' private accounts. The allocated bonds were allowed for trading in the "NASDAQ OMX ARMENIA" OJSC open market.

Տեղաբաշխումներն իրականացվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ տեղաբաշխման հարթակում՝ ստանդարտ փակ աճուրդի միջոցով: Բանկն աջակցել է Ընկերությանը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ-ում և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում պարտատոմսերի սեփականատերերի կողմից պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման և սեփականատերերի անձնական հաշիվներին պարտատոմսերի փոխանցման գործում: Տեղաբաշխված պարտատոմսերը թույլատրվել են առևտրին՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կողմից կազմակերպված պարտատոմսերի ազատ շուկայում (Cbond):

Կորպորատիվ արժեթղթերի առաջնային տեղաբաշխումների ծավալները ըստ թողարկողների | The volume of primary placement of securities by corporate issuers



Բացի բուն տեղաբաշխման ծառայություններից, Բանկը մատուցում է նաև այլ ծառայություններ, մասնավորապես՝ իրականացնում է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումներ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում և, հանդես գալով որպես բաժնետոմսերի շուկա ստեղծող, ապահովում է դրանց իրացվելիությունը երկրորդային շուկայում: 2013թ. ընթացքում ՀՀ բաժնետոմսերի երկրորդային շուկայում իրականացվել է թվով 76 գործարք՝ մոտ 1.5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջնորդությամբ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերով իրականացվել է թվով 12 գործարք՝ շուրջ 408 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, ինչը կազմում է 2013թ. ընթացքում բաժնետոմսերով համախառն բորսայական գործարքների 27.3%-ը:

Besides underwritering the Bank also provides other services, particularly gives two-sided quots for shares' in the "NASDAQ OMX ARMENIA" OJSC and, as a market maker, ensures their liquidity in the secondary market. In 2013 76 transactions were executed in the RA secondary market of shares with the overall amount of AMD 1.5 billion.The Bank intermediated 12 transactions with "ARTSAKH HEK" OJSC's shares with an amount of AMD 408 million which is 27.3% of the total exchange operations with shares.

Բաժնետոմսերի երկրորդային շուկայում կնքված գործարքների ծավալները ըստ թողարկողների

The volumes of transactions implemented in the secondary market by issuers



2013թ. ընթացքում Բանկի կողմից կազմակերպված տեղաբաշխումներից բացի, Բանկը շարունակել է իրականացնել շրջանառության մեջ գտնվող թողարկումների գծով մարումների և հերթական արժեկտրոնների վճարումների սպասարկումը: Մասնավորապես, իրականացվել են «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ պարտատոմսերի մարումները, որոնց ընթացքում Բանկն աջակցել է թողարկողին և մատուցել հաշվարկային բանկային ծառայություններ:

2013թ. ընթացքում Բանկը շարունակել է մատուցել նաև խորհրդատվական ծառայություններ իր կորպորատիվ հաճախորդներին՝ կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության, վերակազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ:

## Դիլերային գործունեություն

Բանկը 2013թ. ընթացքում շարունակել է ակտիվորեն իրականացնել ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում: Այսպես, տարվա ընթացքում արժեթղթերի առաջնային շուկայում Բանկն իրականացրել է մոտ 16 մլրդ ՀՀ դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ մոտ 37,5 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ: Նկատվել է կորպորատիվ արժեթղթերով գործարքների ծավալի նվազում, ինչը պայմանավորված է գործող թողարկումներով՝ մասնավորապես, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերով իրականացված գործարքների պասիվությամբ:

Բանկը ՀՀ բաժնետոմսերի շուկայի զարգացմանը նպաստելու, ինչպես նաև «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ կողմից թողարկված բաժնետոմսերի իրացվելիության մակարդակի բարձրացման նպատակով 2013թ. ընթացքում ևս իրականացրել է այդ ընկերության բաժնետոմսերի երկկողմանի գնանշում՝ կնքելով 325,697 հատ բաժնետոմսերի (408 մլն ՀՀ դրամի) առք ու վաճառքի գործարքներ:

2013թ. ընթացքում Բանկը շարունակել է իր հաճախորդներին տրամադրել, ինչպես նաև այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավել դրամական միջոցներ՝ օգտագործելով ռեպո գործիքը, որի շրջանակներում իրակա-

In 2013, apart from organised underwriting the Bank continued coupon payment and maturity services. Particularly, during the "National Mortgage Company" RCO CJSC's bonds maturity the Bank the Bank supported the issuer and provided payment sevices. In 2013 the Bank also continued providing consultancy services to its corporate clients regarding capital structure, corporate strategy, restructuring and other issues.

## Dealing activity

In 2013 the Bank continued to actively implement operations with RA government and corporate securities in the domestic financial market. During the reporting year the Bank's operations in the primary market amounted to about AMD 16 billion and in the secondary market to about AMD 37.5 billion in nominal value. There was a decrease in operations with corporate bonds explained by passive operations with existing issues at NASDAQ OMX ARMENIA" OJSC particularly "ARTSAKH HEK" OJSC's shares. To promote the development of the RA stock market, and to increase "Artsakh HEK" OJSC's shares' liquidity, in 2013 the Bank gave two-sided quotes for those shares implementing buy/sell transactions with about 325,697 shares (for the amount of AMD 408 million). In 2013 the bank continued to allocate funds with its customers and attract funds from other financial organisations, using repo agreements. Overall amount of the mentioned instrument during the year was AMD 551 billion increasing the previous year's indicator by about 1.7 times as a result of subsitution of the long-term and expensive resources with short-term and cheap resources and the increase of the Bank's investment protfolio. To increase its investment portfolio the Bank purchased more than AMD 10.0 billion nominal value government securities from government securities initial allocation auctions in 2013. During the RA Ministry of Finance's securities repurchase in 2013 the Bank was more active and sold bonds with a nominal value of AMD 5 billion compared to previous year's AMD 2.3 billion. In the secondary market the Bank sold bonds with a nominal value of more than AMD 18.1billion and purchased bonds with nominal value of more than AMD 19.4 billion. As a result, taking also into consideration the volume of matured bonds, the Bank's portfolio of government bonds increased by about AMD 7 billion in nominal value. In 2013 interest income on the bond portfolio increased by 23 percent as compared to 2012 results, amounting to AMD 447 million. In 2013 the Bank kept its status of state debt management agent of the RA government. The structure of the Bank's investment portfolio and income dynamics is presented below:

նացված գործարքների ծավալը կազմել է 551 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ այդ ցուցանիշն աճել է գրեթե 1.7 անգամ՝ երկարաժամկետ և ավելի թանկ ռեսուրսները կարճաժամկետ ու ավելի էժան ռեսուրսներով փոխարինելու, ինչպես նաև Բանկի ներդրումային պորտֆելն ավելացնելու արդյունքում:

2013թ. ընթացքում Բանկը ներդրումային պորտֆելի համալրման նպատակով պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներից ձեռք է բերել ավելի բան 10 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսեր: 2013թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված հետգնումներին մասնակցության արդյունքում Բանկն ավելի ակտիվ է գործել՝ վաճառելով մոտ 5 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր՝ նախորդ տարվա 2.3 մլրդ ՀՀ դրամի փոխարեն: Երկրորդային շուկայում Բանկը վաճառել է ավելի քան 18.1 մլրդ անվանական արժեքով պարտատոմս և գնել ավելի քան 19.4 մլրդ անվանական արժեքով պարտատոմս: Արդյունքում, հաշվի առած նաև պարտատոմսերի մարումները, 2013թ. Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելի անվանական ծավալն աճել է ավելի քան 7 մլրդ ՀՀ դրամով: 2013թ. պարտատոմսերի պորտֆելից Բանկի ստացած տոկոսային եկամուտը 2012թ. համեմատ աճել է մոտ 23%-ով և կազմել է 2,5 մլրդ ՀՀ դրամ, իսկ պարտատոմսերի առք ու վաճառքից ստացված եկամուտը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 7 անգամ և կազմել է շուրջ 447 մլն ՀՀ դրամ: Բանկը 2013թ. պահպանել է պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալի կարգավիճակը:

Բանկի ներդրումային պորտֆելի կառուցվածքը և ստացված եկամտի դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում.

Ներդրումային պորտֆելի կառուցվածքը և եկամտաբերության դինամիկան (հազար ՀՀ դրամով) | The Structure and Income Dynamics of the Bank's Investment Portfolio (thousand AMD)



Տարվա ընթացքում Բանկը շարունակել է մասնակցել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի սակարկություններին, հանդես գալ միջբանկային արտարժութային շուկայում` իրականացնելով մոտ 155.5 մլրդ ՀՀ դրամի չափով միջազգային հիմնական փոխարկելի արժույթներով առք ու վաճառքի գործառնություններ: 2013թ. Բանկը շարունակել է կիրառել արտարժութային սվոփ գործիքը, որի գծով հաշվետու տարվա ընթացքում միջբանկային շուկայում Բանկն իրականացրել է ավելի քան 17 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով գործառնություններ: Հատկանշական է նաև այն, որ հաշվետու տարվա ընթացքում Բանկն իր հաճախորդների հետ նույնպես իրականացրել է սվոփ գործարքներ, որոնց ծավալը 2013թ. ընթացքում կազմել է 4.3 մլրդ ՀՀ դրամ` նախորդ տարվա համեմատ աճելով ավելի քան 2,5 անգամ: Բանկի կողմից 2013թ. կնքված ոսկու ձուլակտորներով գործառնությունների ծավալներն աճել են, ինչը ոսկու միջազգային գնի նվազման և վերջինիս նկատմամբ պահանջարկի ավելացման արդյունք էր: 2013թ. ևս բանկը շարունակել է պահպանել ՀՀ ֆինանսական համակարգի` այս ոլորտում ձեռք բերած իր կայուն դիրքը և ապահովել ՀՀ բանկային համակարգում նշված գործառնությունների գծով ծավալների գերակշիռ մասը:

Տարվա ընթացքում Բանկի կողմից իրականացվել է շուրջ 13.6 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով թանկարժեք մետաղներով առք ու վաճառքի գործառնություններ` նախորդ տարվա 7,5 մլրդ ՀՀ դրամի փոխարեն: Հարկ է նշել նաև, որ 2013թ. Բանկն իր հաճախորդներին շարունակել է մատուցել առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և վարման ծառայություններ, որոնց գծով իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 84 մլն ՀՀ դրամ` նախորդ տարվա համեմատ աճելով ավելի քան 85%-ով:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը պատկանում է ՀՀ տարածքում գործող այն եզակի բանկերի թվին, որոնք իրականացնում են ՀՀ դրամի և հիմնական արտարժույթների, ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերի, արտարժութային ֆորվարդային գործիքների, միջբանկային ավանդային ու ռեպո գործառնությունների տոկոսադրույքների գնանշում Bloomberg և Reuters տեղեկատվական համակարգում` Բանկի պաշտոնական էջում: 2013թ. Բանկը շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել ինչպես ՀՀ տարածքում` բանկերում տեղաբաշխելով և ներգրավելով կարճաժամկետ ու միջնաժամկետ դեպոզիտներ և վարկեր,

In 2013 the Bank continued participating in foreign currency biddings at "NASDAQ OMX ARMENIA" OJSC stock exchange, bought and sold currency of about AMD 155.5 billion with the main convertible currencies in the interbank Forex market. In 2013 the Bank continued to offer foreign currency swaps extensively, implementing transactions in the interbank market for around AMD 17.0 billion.

During the reporting year, the Bank also implemented AMD 4.3 billion swap transactions with its clients, which exceeds the previous year's indicator by more than 2.5 times.

In 2013 the Bank's operations with gold bullions increased due to decrease in international gold price and increase in demand for it. In 2013 the Bank continued maintaining strong positions in this area of the RA financial system having a major market share in the RA banking system. During the year the Bank implemented purchase and sell transactions with precious metals of around AMD 13.6 billion as compared to previous year's AMD 7.5 billion. In 2013 the Bank also continued opening and serving non-physical metal accounts amounting to AMD 84 million, which is by 85 percent more than the same indicator in 2012.

ARMSWISSBANK is one of those rare banks in Armenia, which provides quotations for AMD and main currencies, RA government and corporate securities, foreign currency forwards, interbank deposits and repurchase agreements at the official page of the Bank at Bloomberg and Reuters information systems.

The Bank is active both in the RA (attracting and allocating short and medium term deposits and loans) and international money markets, depositing in leading foreign banks. Overall deposits and loans amounted to AMD 7 billion and AMD 34 billion respectively.

## Brokerage activity

Investment banking including brokerage services is considered as one of the Bank's main strategic activities and is carried out in accordance with international standards. Within the scope of brokerage activities the Bank offers its clients a wide variety of investment instruments, such as shares and depository receipts of American, European and Russian companies, government and corporate securities, commodity futures, repo agreements with foreign securities and marginal operations.

այնպես էլ միջազգային փողի շուկայում՝ ներդնելով դեպոզիտներ արտասահմանյան առաջնակարգ բանկերում: Դեպոզիտների և վարկերի ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է համապատասխանաբար 7 մլրդ և 34 մլրդ ՀՀ դրամ:

## Բրոքերային գործունեություն

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցումը: Բանկն իր բրոքերային գործունեության շրջանակներում հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական ընկե-րությունների բաժնետոմսեր ու դեպոզիտար ստացականներ, պետական և կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ու ֆինանսական ֆյուչերսներ և օպցիոններ, օտարերկրյա արժե-թղթերով ռեպո գործառնություններ ու մարժինալ գործարքների կնքման հնարավորություն: Հաշվե-տու տարվա ընթացքում Բանկի բրոքերային հաճախորդների թիվը 2012թ. համեմատ աճել է ավելի քան 8%-ով: Գործարքներ են կնքվել ռուսական, եվրոպական, ամերիկյան և կանադական բորսաներում շրջանառվող առա-ջատար ընկերությունների բաժնետոմսերով և դեպոզիտար ստացականներով: Ընդհանուր առմամբ, 2013թ. ընթացքում Բանկի հաճախորդ-ների հանձնարարականների հիման վրա իրականացվել է թվով 181 բրոքերային գործարք՝ 1.85 մլրդ ՀՀ դրամին համարժեք ընդհանուր ծավալով: Վերոնշյալ ծավալի մոտ կեսը՝ 950 մլն ՀՀ դրամը, բաժին է ընկել օտարերկրյա արժեթղթերով իրականացված բրոքերային գործարքներին:

2013թ. ընթացքում Բանկն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կորպորատիվ արժեթղթերի հարթակներում իրականացվող սակարկություններին: 2013թ. Բանկն իր հաճախորդներին շարունակել է մատուցել օտարերկրյա արժեթղթերով մարժինալ գործարքների կնքման ծառայություններ, ինչը ենթադրում է հաճախորդներին լրացուցիչ ֆինանսավորման տրամադրում՝ արժեթղթեր ձեռք բերելու նպատակով: Արդյունքում, տարվա ընթացքում Բանկի հաճախորդներն իրականացրել են 332 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով մարժինալ գործարքներ:

During the reporting year the number of the Bank's brokerage clients increased by more than 8% compared to 2012. Transactions were executed with shares and depository receipts of leading companies at Russian, European and American stock exchanges. The total number of brokerage transactions implemented upon the orders of the Bank's clients during 2013 was 181 with an amount of AMD 1.85 billion. Almost half of this amount, namely AMD 950 million is attributed to the brokerage transactions with foreign securities.

In 2013 the Bank also had active participation in the auctions at corporate securities platforms of the "NASDAQ OMX ARMENIA" OJSC.

In 2013 the Bank continued marginal transactions with foreign securities which assumes additional financing to the clients to purchase securities. As a result, the Bank's clients implemented marginal transactions of AMD 332.0 million during the year.



ԱՆԺԵԼԱ
ԲԱՐՍԵՂՅԱՆ
Anzhela Barseghyan

Բիզնեսի զարգացման
դեպարտամենտի տնօրեն

Director of Business Development
Department

# Մարքեթինգ

## Marketing

2013թ. շարունակվել են աշխատանքները Բանկի տնային էջի բարելավման ուղղությամբ, ավելացվել են կայքի ֆունկցիոնալ հնարավորությունները, որի արդյունքում կայքը դարձել է էլ ավելի ինֆորմատիվ և գրավիչ: Բանկի տնային էջը պարունակում է Բանկի բիզնես-փիլիսոփայության, հիմնական արժեքների, մատուցվող ծառայությունների, Բանկի ղեկավարության, ինչպես նաև Բանկի գործունեության վերաբերյալ այլ անհրաժեշտ տեղեկություններ: Կայքը նաև տեղեկատվություն է տրամադրում Բանկի, ինչպես նաև տեղական և միջազգային ֆինանսական շուկաների հիմնական գործիքների վերաբերյալ: 2013թ. շարունակվել է իրականացվել լայնածավալ ինտերնետային մարքեթինգ, որի արդյունքում տարբեր տեղեկատվական և մասնագիտացված վեբ-կայքերում տեղադրվել են Բանկի իմիջային և ծառայությունները ներկայացնող գովազդային բաններներ և լինքեր՝ հղումով դեպի Բանկի ինտերնետային կայք և համապատասխան պրոդուկտների էջեր: 2013թ. ձևավորվել է Բանկի աշխատակիցներից բաղկացած դիզայներական թիմ՝ աշխատակիցների շրջանում նախաձեռնողականության դրսևորման և առողջ գաղափարների վերհանման նպատակով: Դիզայնե-րական թիմը զբաղվում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունները և պրոդուկտները ներկայացնող բուկլետների դիզայնի և բովանդակության վերա-խմբագրման հարցերով: Առաջարկվող բանկային նոր ծառայություններին զուգահեռ մշակվել և տպագրվել են նոր բուկլետներ: Բանկն իրականացրել է նաև մարքեթինգային վերլուծություններ, ուսումնա-սիրել է ՀՀ բանկային շուկան և մրցակիցների ծառայությունները, սակագները, առանձին պրո-դուկտների մասով մշակել է իր սակագնային քաղաքականությունը: Ելնելով միջազգային փորձից և հաճախորդների կարիքներից՝ Բանկը շարունակել է իրականացնել աշխատանքներ փրայվիթ բենքինգի և սպասարկման նոր տեխնոլոգիաների մշակման ու ներդրման ուղղությամբ: Նոր հաճախորդների ներգրավման նպատակով շարունակվել է «դայրեքթ մարքեթինգ»-ի արդյունավետ կիրառումը:

Բանկը, հայ-շվեյցարական տնտեսական ոլորտի մասնավոր հարաբերությունների զարգացմանն աջակցելու նպատակով 2013թ. նախաձեռնեց «Հայ-շվեյցարական գործարարության զարգացման միություն» հիմնադրելու գործընթացը: Ելնելով միության հիմնական նպատակից Բանկը, հանդիսա-նալով միության հիմնադիր անդամ, 2014թ. նախատեսում է Ցյուրիխում կազմակերպել Բիզնես ֆորում Հայաստանի և Շվեյցարիայի գործարարների մասնակցությամբ:

In 2013 the Bank continued to improve its web page adding new functions and making the web page more informative and attractive. The home page of the Bank provides information about the Bank's business-philosophy, main values, services, the Bank's managing staff and other usefull infomration about the Bank's main operations. An information about local and international financial markets instruments is also presented in the web page. In 2013, the Bank continued to implement extended internet-marketing posting add banners on different kinds of informative and specific web-sites linked to the main web-site of the Bank and respective products' pages.

In 2013, a designing team was formed with the participation of employees to motivate them to come out with initiatives and new and fresh ideas. The team edits and re-edits the design of the booklets and carries outs the necessary updates. Across with the introduction of new products the new kinds of booklets were created.

The Bank periodically implements marketing researches, studies the RA banking market, services offered by the competitors, fees and interest rates and as a result develops its own tariff policy.

Taking into consideration the international experince and the needs of its clients the bank continued to work towards developing and installing private banking and customer service new technologies.

The Bank continued to effectively apply the "direct marketing" to attract new clients.

To assist the development of private sector realtionships between Armenian and Swiss economies the Bank initiated the creation of "Armenian-Swiss Bussiness Development Association" in 2013. Taking into consideration the main purpose of the Union, in 2014, as a founder-memeber, the Bank plans to organize Business Forum between Armenian and Swiss enterprenuers in Zurich.

# Տեղեկատվական տեխնոլոգիաներ

## Information technologies

Բանկն իր գործունեության սկզբից ևեթ կարևորել է տեխնիկական համապատասխան հագեցվածության և տեղեկատվական կարիքների ապահովման հարցերը ու շարունակական աշխատանքներ տանում նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Բանկն անդամակցում և ներկայումս էլ շարունակում է համագործակցությունը մի շարք տեղական, ինչպես նաև միջազգային վճարային ու տեղեկատվական համակարգերի հետ: Մասնավորապես, Reuters Wealth Manager և Bloomberg համակարգերում Բանկի կողմից գնանշվում են ՀՀ դրամը, հիմնական արտարժույթները, ՀՀ պետական պարտատոմսերը և ՀՀ կորպորատիվ արժեթղթերը:

Բանկը 2013թ. իրականացրել է մի շարք միջոցառումներ տեղեկատվական անվտանգության բարձրացման նպատակով՝ առաջնորդվելով միջազգայնորեն ընդունված COBIT և ISO 27001 ստանդարտներով:

Swift միջազգային վճարահաշվարկային համակարգում տեղադրվել և շահագործվում է Swift Alliance 7 փաթեթը, որն ունի մի շարք առավելություններ նախկին տարբերակների համեմատ:

Բանկում առկա է երկու առանձին սերվերային սենյակ, որոնք ապահովում են սերվերների պահուստային աշխատանքի անխափանությունը: Բանկն իր հաճախորդներին տրամադրում է ՀԾ-Ինտերնետ-Բանկ համակարգից օգտվելու հնարավորություն, որի միջոցով հաճախորդները կարող են հեռահար կարգով սպասարկվել Բանկում: Այն թույլ է տալիս աշխարհի ցանկացած կետից, ցանկացած պահի, առանց Բանկ այցելելու ինտերնետ կապի միջոցով ապահով և անվտանգ օգտվել բանկի հիմնական ծառայություններից: Ինտերնետ կայքի անվտանգությունն ապահովելու նպատակով կիրառվում են միջազգային մեծ ճանաչում ունեցող

From the very beginning the Bank has emphasized the importance of sound technical and information support, constantly introducing new technologies. The Bank has joined a number of local and international payment and information systems. Particularly the Armenian dram, the other main currencies, RA treasury bonds and RA corporate bonds are quoted in Reuters Wealth Manager and Bloomberg systems.

In 2013 guided by the international COBIT and ISO 27001standards the Bank implemented a number of activities to increase information security.

The Swift Alliance 7 package was installed in SWIFT international payment system, which has a rage of advantages compared to the previous one.

There are 2 separate server rooms in the Bank that ensures the continuity of the servers' reserve work.

The AS Internet Bank system is offered to the customers of the Bank, which allows them to use the Bank's main services remotely, that is, via the internet. It allows the customers to execute transactions safely and securely from any place, at any time without visiting the Bank and without significant expenses. To ensure the security of the Bank's web site the certificates of the globally recognized VeriSign Company are applied.

The Bank will continue expanding the range of services provided by the "Bank-Client" on line system matching them to the needs of the Bank and its clients as well as improving the new "Internet Banking" system.

To improve and automate some processes for Customer Relationship Management the Bank initiated te installment of an advanced and modern system. After advanced researches and analysis the Bank installed Microsoft Dynamics CRM of Microsoft Co in 2013.

To ensure the business continuity and to provide customers with continual services as well as to increase the access to the Bank's data, in 2013, a decision was

VeriSign կազմակերպության սերտիֆիկատները:

Բանկը շարունակելու է ընդլայնել «Բանկ-Հաճախորդ» համակարգի միջոցով մատուցվող առցանց ծառայությունները՝ համապատասխանեցնելով դրանք Բանկի և Բանկի հաճախորդների պահանջներին, ինչպես նաև կատարելագործել «Ինտերնետ Բանկ» նոր համակարգը:

Միևնույն ժամանակ, հաճախորդների հետ հարաբերությունների կարգավորման ոլորտում առկա գործիքակազմը հարստացնելու և մի շարք գործընթացներ ավտոմատացնելու նպատակով Բանկը 2013թ. ձեռնամուխ եղավ հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման ժամանակակից համակարգի ներդրմանը: Իրականացված լուրջ ուսումնասիրությունների արդյունքում ընտրությունը կանգ առավ հանրահայտ Մայքրոսոֆթ ընկերության մշակած Microsoft Dynamics CRM համակարգի վրա:

Հաճախորդներին մատուցվող ծառայությունների անխափան աշխատանքն ապահովելու, ինչպես նաև Բանկի տվյալների հասանելիությունը բարձրացնելու նպատակով՝ 2013թ. որոշում կայացվեց Դիլիջանի կրթական-հետազոտական համալիրի պահուստային կենտրոնի սերվերային սենյակում տեղադրել Բանկի սեփական սարքավորումները:

2013թ. նույնպես Բանկի առաջնային խնդիրներից է եղել ռիսկերի նվազեցումը, որն իր մեջ ներառում է ՏՏ բոլոր գործընթացները, մասնավորապես (անձերի և համակարգերի) փոխարինելիության ապահովումը և տեղեկատվական տեխնոլոգիաների համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին ((COBIT), ISO 27001)) և գործնականում դրանց կիրառումը:

made to place the Bank’s equipments in the server room of “Dilijan study-research complex”.

One of the main tasks for the Bank was risk reduction in IT operations, particularly ensuring the staff’s and systems’ substitutability as well as IT correspondence to the international standards ((COBIT), ISO 27001)).



ԳՐԻԳՈՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ
Grigor Movsisyan

Գործադիր տնօրենի տեղակալ -
Ռիսկերի կառավարման
դեպարտամենտի տնօրեն

Deputy Executive Director -
Director of Risk Management
Department

# Ռիսկերի կառավարում

## Risk management

Բանկի կառավարման մարմինները մշտապես կարևորել են Բանկի ռիսկերի արդյունավետ և անընդհատ կառավարումը: Բանկի Խորհուրդը, Գործադիր տնօրենը, Տնօրինությունը, ինչպես նաև Բանկի յուրաքանչյուր աշխատակից ընդգրկված են ռիսկերի կառավարման գործընթացում: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Բանկի ռազմավարական պլանավորման գործընթացի, ինչպես նաև կարճաժամկետ ու միջնաժամկետ ծրագրերի գնահատման և ներդրման մի մասը: Ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգում է Բանկի Խորհուրդը, որը որդեգրած քաղաքականության շրջանակներում հաստատում է սահմանաչափեր, ուղենիշներ, ներդրումային ուղեցույցներ, վարկառուների և գործընկերների ընտրության չափանիշներ, գրավների նկատմամբ պահանջներ և այլն, որոնք սահմանափակում են Բանկի վարկային, շուկայական և այլ ռիսկերը: Բանկում գործում են խորհրդատվական և որոշումներ կայացնող կոլեգիալ մարմիններ՝ Տնօրինություն ու Վարկային, Ներդրումային, Ակտիվների և պարտավորությունների կառավարման, Գործունեության համապատասխանության հսկման ու Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման կոմիտեներ:

Բանկում գործում է Ռիսկերի կառավարման դեպարտամենտ, որն անկախ է գործարքներն իրականացնող ստորաբաժանումներից, իրականացնում է ընթացիկ և պարբերական հսկողություն Բանկի կողմից իրականացված գործառնությունների նկատմամբ՝ ուսումնասիրելով առավել ռիսկային գործարքները, հետևելով Բանկի ներքին նորմատիվային դաշտին, Խորհրդի և Տնօրինության կողմից հաստատված սահմանաչափերին ու նպատակային ցուցանիշներին, ինչպես նաև իրականացնում է վարկային գործիքների մոնիթորինգ և որակի հսկողություն: Բանկում մշակված և ներդրված է վարկային, շուկայական, իրացվելիության և գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝

The Bank's management has always prioritized the effiency and consistancy of risk management mechanisms. The Bank's Board, the Management Board, the Executive Director as well as each employee of the Bank are involved in the risk management process. Risk analysis is a vital component of the Bank's strategic planning process as well as the assessment and implementation of short and medium term projects.

The risk management process is regulated by the Board, which establishes limits, benchmarks, investment guidelines, criteria of selecting borrowers and partners, collateral requirements, etc., which reduce the Bank's exposure to credit, market and other risks.

Collective decision-making and consultative bodies operate in the Bank, namely, the Management Board, Credit, Investment, Assets and Liabilities Management, Compliance and Customer Relations Management committees.

The Bank has a Risk Management Department which is independent from operational units and excercises daily and periodic control over the Bank's operations through examining higher risk transactions, monitoring the compliance with the internal normatives of the Bank as well as with the limits and benchmarks set by the Supervisory Board and the Management Board and also monitores the credit instruments and implements quality control.

An effective system of credit, market, liquidity and operational risk management is applied in the Bank based on modern methods and technologies of risk assessment and mitigation. The Bank periodically reviews the existing investment guidelines, approved limits and credit risk assessment guidlines adjusting them to the situation of local and international financial markets. Stress test models are periodically exercised for observing the risks typical to the Bank. The instruments available from foreign partners are used to hedge the foreign currency risk and limits are defined for derivatives according to the regulation enforced in the Bank. One of the key elements of interest rate risk management, namely the maturity GAP model, is applied for the assessment of interest rate risk.

հիմնված ռիսկերի գնահատման ու զսպման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների վրա: Բանկը պարբերաբար վերանայում է ներդրումային ուղենիշների գործող ուղեցույցը, հաստատված սահմանաչափերը և վարկային ռիսկի գնահատման մեթոդական ուղեցույցները` դրանք համապատասխանեցնելով միջազգային և տեղական ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակին: Բանկին բնորոշ ռիսկերի ուսումնասիրության նպատակով պարբերաբար կիրառվում են սթրես-թեստերի մոդելներ: Արտարժութային ռիսկը հեջավորվում է արտասահմանյան գործընկերների կողմից տրամադրվող գործիքակազմի միջոցով, ածանցյալ գործիքների համար սահմանվում են սահմանաչափեր` համաձայն Բանկում գործող կարգի: Տոկոսադրույքի ռիսկի գնահատման համար կիրառվում է տոկոսադրույքի ռիսկի կառավարման հիմնական տարրերից մեկը` ժամկետայնության ճեղքվածքի (GAP) մոդելը:

Գործառնական ռիսկերի կառավարման նպատակով պարբերաբար ուսումնասիրվում և բարելավվում են որոշումների կայացման ու վերահսկման գործընթացները, հնարավոր կորուստները ծածկելու նպատակով Բանկը ձեռք է բերել ապահովագրական փաթեթներ (բանկային ռիսկերի համապարփակ ապահովագրություն (BBB), շենքի և գույքի ապահովագրություն): Իրավական ռիսկի կառավարման համար Բանկում գործում է համապատասխանության (compliance) գործառույթն իրականացնող կոմիտե, որն արագ արձագանքում է բանկային համակարգում տեղի ունեցող իրավական և այլ փոփոխություններին և տեղեկացնում է Բանկի ղեկավարությանն ու համապատասխան ստորաբաժանումներին: Բանկը միջազգայնորեն ընդունված սկզբունքներով իրականացնում է պայքար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ` համակողմանիորեն ուսումնասիրելով Բանկի հաճախորդներին, գործընկերներին և շահառուներին:

To manage the operational risk, decision making and control procedures are periodically studied and improved. To cover possible loss the Bank has acquired insurance packages, namely, the BBB (Bankers Blanked Bond) and Building and Property insurance policies.

To manage legal risks a committee ensuring the compliance function operates in the Bank which quickly responds to legal and other changes in the banking sector and immediately informs the Bank's management and relevant units.

The Bank implements detailed and comprehensive study of its clients, partners and beneficiaries within the framework of its Anti-Money Laundering and Counter-Terrorism Financing policy based on international standards.

# Ներքին աուդիտ

## Internal audit

Բանկի Ներքին աուդիտն իրականացնում է Բանկի գործունեությանն առնչվող ռիսկերի նվազեցման և կանխարգելման նպատակով ձևավորված ներքին հսկողության մեխանիզմների բավարարության և արդյունավետության գնահատում: Ներքին աուդիտի կողմից իրականացվում է նաև Բանկի գործունեության՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կենտրոնական բանկի և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ստուգում:

Ներքին աուդիտն իրականացնում է ինչպես ծրագրային ստուգումներ Բանկի խորհրդի կողմից հաստատված Ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հիման վրա, այնպես էլ արտածրագրային ստուգումներ իր նախաձեռնությամբ: Ներքին աուդիտն իր աշխատանքների իրականացման շրջանակում ակտիվորեն համագործակցում է Բանկի կառավարման մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Ներքին աուդիտի կողմից 2013թ. ընթացքում ամբողջությամբ իրականացվել են Բանկի խորհրդի կողմից հատատված ծրագրային միջոցառումները:

The Internal Audit evaluates whether the internal control mechanisms for the reduction and prevention of the risks related to the Bank's activity are sufficient and effective as well as monitors the complicance of the Bank's activity to the RA legislation, legal requirements of the CBA and internal regulations of the Bank.

The Internal Audit both carries out planned examinations according to its annual work plan approved by the Bank's Board and initiates examinations at its own discretion. The Internal Audit closely cooperates with the Bank's governing bodies and structural units.

In 2013 the Internal Audit has completed all of the planned activities approved by the Bank's Board.



## Հուսալիություն | Reliability

Լինելով հուսալի գործընկեր նախընտրում ենք համագործակցել հուսալի գործընկերների հետ՝ հիմնված կայուն հիմքերի վրա:

Being a reliable partner, we prefer to cooperate with sustainably based reliable partners.

# Անձնակազմի կառավարման քաղաքականություն

## Human resource management

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի հաջողության գաղտնիքն ու զարգացման հիմնաքարն են հանդիսանում մեր առաջադեմ և փորձառու մասնագետները, ովքեր հավատարիմ են Բանկի նպատակներին ու որդեգրած քաղաքականությանը:

2013թ. ևս Բանկը կարևորեց աշխատակիցների ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման հարցերը: Այսպիսով, 2013թ. ընթացքում Բանկի 73 աշխատակից մասնակցեց 50 սեմինարի, պրեզենտացիայի, կոնֆերանսի և դասընթացի ՀՀ տարածքում, արտասահման գործուղվեց 4 աշխատակից՝ մասնակցելու արտասահմանյան կոնֆերանսների ու վերապատրաստումների, ինչպես նաև Բանկի աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպվեց 28 ներքին սեմինար, որոնք փորձի, գիտելիքների, գաղափարների և կարծիքների փոխանակման հնարավորություն ընձեռեցին:

Շարունակվել է նաև ACCA որակավորման քննությունների հաջորդական փուլերին աշխատակիցների մասնակցության գործընթացի կազմակերպումը, և տարվա ընթացքում 5 աշխատակցի շնորհվել է ACCA հերթական որակավորում: Բացի այդ, Բանկի 3 աշխատակցի շնորհվել է նաև GARP (Global association of Risk Professionals) միջազգային ասոցիացիայի ռիսկերի սերտիֆիկացման ծրագրի (Risk certification program) համապատասխան որակավորում: Նշենք նաև, որ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) ու Առևտրի միջազգային պալատի (ICC) կողմից կազմակերպվող առցանց (on-line) սեմինարներին այս տարի ևս մասնակցեցին Բանկի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ, որոնք բարեհաջող հանձնեցին որակավորման 7 մոդուլները: Ծրագրում ներգրավված էին 8 աշխատակից, որից 3-ը ընդգրկվեցին EBRD մրցանակաբաշխության լավագույն տասնյակի մեջ, ստացան մրցանակներ, այդ թվում նաև՝ Եվրոպական առաջատար բանկերից մեկում

The secret and the cornerstone of ARMSWISSBANK's success lies in its team of leading and experienced employees who are loyal to the Bank's objectives and adopted policy and stand out for their skills, professionalism and ability to perform effective teamwork.

As in previous years, the Bank continued prioritizing the continuous training and professional development of its personnel.

In 2013, 73 employees of the Bank participated in 50 seminars, presentations and conferences in the Republic of Armenia and 4 employees participated in conferences and trainings abroad. Furthermore, 28 internal seminars were held in the Bank by the employees promoting exchange of experience, knowledge, ideas and opinions.

The process of organizing employees' participation to the successive levels of ACCA examinations continued and 5 employees received subsequent ACCA qualifications. Also three of employees received the respective qualification by the GARP (Global association of Risk Professionals) international certification program. In 2013 employees from different departments of the Bank successfully took 7 exam-modules of the training program in trade finance (e-learning) organized jointly by EBRD and the International Chamber of Commerce (ICC). Eight employees of the Bank Staff participated in the mentioned training program and as a result three of them were ranked among the top 10 participants and were awarded by the EBRD. Two of them received opportunity to take training lessons in leading European banks.

To ensure fairness and objectivity the Bank's recruitment process is performed via organized competitions, choosing among candidates upon criteria of professionalism. In 2013 the Bank recruited both experienced and young professionals (11 new employees).

As of 31December, 2013 the number of the Bank's employees was 95. The average age of employees is 32.

In 2013, around 90% of the employees participated in the

վերապատրաստման դասընթացներ անցնելու հնարավորություն:

Առաջնորդվելով անաչառության և օբյեկտիվության ապահովման սկզբունքներով՝ 2013թ. ընթացքում Բանկը համալրեց անձնակազմը ինչպես փորձառու կադրերով, այնպես էլ երիտասարդ մասնագետներով (11 նոր աշխատակից):

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների թվաքանակը կազմել է 95: Աշխատակիցների միջին տարիքը 32-ն է:

Բանկի սոցիալական փաթեթում ներառված առողջության ապահովագրության շրջանակներում 2013թ. ընթացքում ընդգրկվեց անձնակազմի շուրջ 90%-ը:

Բանկի զարգացմանն ու ծառայությունների ավելացմանը զուգահեռ մշտապես իրականացվում է կառուցվածքի վերանայում և կատարելագործում: Այս գործողությունների շրջանակներում 2014թ. ընթացքում ակնկալվում են հետևյալ փոփոխությունները՝

- Ներքին աուդիտի գործունեության արդյունավետության բարձրացման, այդ թվում՝ ներքին աուդիտ-Խորհուրդ ուղղակի կապի ուժեղացման առնչությամբ Բանկի խորհուրդը նպատակահարմար է գտնում Խորհրդին կից ստեղծել Աուդիտի կոմիտե,
- Գործող հաճախորդների կարիքների բացահայտման, հաճախորդների սպասարկման որակի բարելավման և հաճախորդների հետ հետադարձ կապի ուժեղացման նպատակով Բանկը նախատեսում է 2014թ. ստեղծել Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման հարցերով զբաղվող օղակ:

health insurance package offered within the scope of the Bank's social policies.

The Bank's organizational structure is always reviewed and improved together with the development and expansion of services. Within the scope of those activities the following changes are to be made in 2014:

